

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____2019 ԹՎԱԿԱՆ N - Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 13-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Էկոնոմիկայի նախարարության Պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինության Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Արզումանյան փողոց 6 հասցեում գտնվող շենք-շինություններից՝ 16635139 դրամ կադաստրային արժեքով 988 քառ.մետր ընդհանուր մակերեսով անշարժ գույքը, հասարակական կառուցապատման հողամասերից՝ 424315 դրամ կադաստրային արժեքով 0,22644 հեկտար մակերեսով սպասարկման հողատարածքը (այսուհետ՝ անշարժ գույք) հետ վերցնել «Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունից և անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Գորիսի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը /հասցեն՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս, Ավանգարդ 2, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի հ.03Ա071216 վկայական/:

2. Էկոնոմիկայի նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ հիմք ընդունելով անշարժ գույքի չափագրման արդյունքում ստացված տվյալները՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում «Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել 2017 թվականի հունիսի 29-ին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման N 67/0017 պայմանագրում սույն որոշումից բխող փոփոխություն կատարելու մասին համաձայնագիր (այսուհետ՝ համաձայնագիր)՝ դրանում սահմանելով, որ համաձայնագրի նոտարական վավերացման ու համաձայնագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերն իրականացվելու են «Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին,

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո երկամսյա ժամկետում «Գորիսի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի

անհատույց օգտագործման պայմանագիր՝ դրանում սահմանելով, որ պայմանագրի նոտարական վավերացման ու պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերն իրականացվելու են «Գորիսի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

3. Սույն որոշման հիման վրա կնքված համաձայնագրում և պայմանագրում նախատեսել, որ «Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Արզումանյան փողոց 6 հասցեում գտնվող շենքի զբաղեցրած 0.11119 հա մակերեսով հողամասը հանդիսանում է «Գորիսի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ համատեղ օգտագործման հողատարածք:

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

Անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության կառավարության «Անշարժ գույք հետ վերցնելու և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնելու մասին» որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Գորիսի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության/այսուհետև՝ հիմնադրամ/ գործունեության բարելավման անհրաժեշտությունից:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

ՀՀ կառավարության 29.09.2016թ. ««Գորիսի N 1 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու մասին» N986-Ն որոշման համաձայն «Գորիսի N 1 հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմավորվել է «Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության/այսուհետև՝ կենտրոն/ և վերջինիս նպատակային օգտագործում է փոխանցման ակտով հանձնված 0,60818հա հողամասի և 2851,7 քառ.մետր շենք-շինությունների մի մասը:

Խորհրդային տարիներից համալսարանին ժառանգություն մնացած հանրակացարանի 85 սենյակների մեծ մասը և դասախոսների ժամանակավոր կացարանները, տարբեր ժամանակներում, անհասկանալի պատճառներով սեփականաշնորհվել են, և ներկայումս համալսարանի տրամադրության տակ գտնվող 9 սենյակը գտնվում են բարձրահարկ մասնաշենքի տարբեր հարկերում, ինչն էլ առաջացնում է սպասարկման և արդյունավետ կառավարման լուրջ խնդիրներ:

Համալսարանի համար շատ կարևոր է ուսումնական գործընթացում ներգրավել օտարերկրյա սովորողների, որն էլ կնպաստի համալսարանի միջազգայնացմանն ու կլուծի շատ ֆինանսական խնդիրներ: Տարածքի տրամադրման դեպքում հնարավորություն կտրվի ստեղծել ուսումնական կենտրոն, որտեղ սկզբնական շրջանում կկազմակերպվեն լեզվի ուսուցման և մասնագիտական կողմնորոշման նախապատրաստական դասընթացներ՝ Իրանի իսլամական հանրապետությունից ժամանած սովորողների համար: Կենտրոնում կարող են կազմակերպվել նաև վերապատրաստման դասընթացներ Իրանի իսլամական հանրապետությունում գործող հայկական դպրոցների ուսուցիչների համար:

Կարգավորման նպատակը

Սույն նախագծի ընդունմամբ կենտրոնին ամրացված՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Արզումանյան փողոց 6 հասցեում գտնվող շենքից 988 քառ.մետր ընդհանուր մակերեսով տարածքը և 0,22644 հեկտար մակերեսով հողատարածքը համալսարանին անհատույց օգտագործման իրավունքով, իսկ շենքի զբաղեցրած 0.11119 հա հողամասը ընդհանուր օգտագործման իրավունքով տրամադրելու դեպքում հնարավորություն կառաջանա ընդլայնել լսարանային ֆոնդը և ստեղծել հանրակացարանային պայմաններ՝ ինչպես սովորողների, այնպես էլ հրավիրված մասնագետների համար:

Միաժամանակ համալսարանի հատուկ մանկավարժության մասնագիտական ստորաբաժանման մասնագետները նշված տարածքում գործող «Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ին կցուցաբերեն մասնագիտական օժանդակություն և կնպաստեն կադրերի վերապատրաստման դասընթացների կազմակերպմանը:

ՏԵՂԵԿԱԼՔ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման մասին

«Անշարժ գույք հետ վերցնելու և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի առաջացնի:

**«ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
 ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՍԱՑՎԱԾ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Առարկության, առաջարկության հեղինակ, գրության ստացման ամսաթիվ, գրության համար	Առարկության, առաջարկության բովանդակություն	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
1. ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե 09.01.2019թ. հ. ՍՊ/31-19	Առաջարկություններ և առարկություններ չկան:		
2. Ֆինանսների նախարարություն 14.01.2019թ. հ. 01/9-5/259-19	Առաջարկվում է. Նախագծում անհրաժեշտ է լրացնել դրույթներ անհատույց օգտագործողի գտնվելու վայրի և (կամ) կազմակերպության վերաբերյալ այլ տվյալներ, հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 2011 թ. փետրվարի 17-ի թիվ 304-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ անշարժ գույքն անհատույց օգտագործման է տրամադրվում ՀՀ կառավարության որոշման հիման վրա, որը ներառում է անհատույց օգտագործողի անունը (անվանումը), հասցեն (գտնվելու վայրը), անձնագրի տվյալները և (կամ) կազմակերպության վերաբերյալ այլ տվյալները:	Ընդունվել է	Խմբագրվել է
3. Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն 20.02.2019թ. հ. 01/1188-19	Առաջարկվում է. Որոշման նախագծում նախատեսել նաև դրույթ 0.11119 հա հողամասի ընդհանուր օգտագործման վերաբերյալ:	Ընդունվել է	Խմբագրվել է
4. Արդարադատության նախարարություն 14.03.2019թ. հ. 01/14/5311-19	Առաջարկություններ և առարկություններ չկան:		

<p>5.ՀՀ վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի վարչություն 21.03.2019.թ. 02/11.1/13306-2019</p>	<p>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ</p> <p>Նախագծի 1-ին կետում անհասկանալի է և պարզաբանման կարիք ունի «ընդհանուր օգտագործման իրավունքով» անշարժ գույք հետ վերցնելու մասին դրույթը: Դատելով նախագծի ամփոփաթերթից՝ կարելի է ենթադրել, որ վերոնշյալ դրույթը նախագծում տեղ է գտել Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի առաջարկությամբ: Մինչդեռ, նախագծի փաթեթում ներառված՝ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի գրության վերլուծությունից պարզ է դառնում, որ առաջարկությունը վերաբերում է 0.11119 հա հողամասը «Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» և «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ների ընդհանուր օգտագործմանը տրամադրելուն: Հետևաբար, կարծում ենք, որ նախագիծն այդ մասով ենթակա է լրամշակման:</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Լրամշակվել է</p>
<p>6. Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն 23.04.2019թ. հ. 01/3324-19</p>	<p>Առաջարկում է.</p> <p>1. Որոշման նախագծի 1-ին կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«1. Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինության Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Արզումանյան փողոց 6 հասցեում գտնվող շենք-շինություններից՝ 16635139 դրամ կադաստրային արժեքով 988 քառ.մետր ընդհանուր մակերեսով անշարժ գույքը, հասարակական կառուցապատման հողամասերից՝ 424315 դրամ կադաստրային արժեքով 0,22644 հեկտար մակերեսով սպասարկման հողատարածքը (այսուհետ՝ անշարժ գույք) հետ վերցնել Կրթության և գիտության նախարարության ենթակայության «Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունից և անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Գորիսի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությանը /հասցեն՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս, Ավանգարդ 2, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի հ.03Ա071216 վկայական/»:</p>	<p>1.Ընդունվել է</p>	<p>1.Լրամշակվել է</p>

	<p>2. Որոշման նախագծի 2-րդ կետի 1-ին ու 2-րդ ենթակետերից հանել «շենքի զբաղեցրած 0.11119 հա հողամասի ընդհանուր օգտագործման իրավունքի և» և «իրականացնելու վերաբերյալ» բառերը, «դրանում սահմանելով» բառերից հետո լրացնել «որ» բառը, իսկ «ծախսերը» բառից հետո՝ «իրականացվելու են» բառերը,</p> <p>3. Որոշման նախագիծը լրացնել 3-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«3. Սույն որոշման հիման վրա կնքված համաձայնագրում և պայմանագրում նախատեսել, որ «Գորիսի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Արզումանյան փողոց 6 հասցեում գտնվող շենքի զբաղեցրած 0.11119 հա մակերեսով հողամասը հանդիսանում է «Գորիսի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ համատեղ օգտագործման հողատարածք:»:</p>	<p>2.Ընդունվել է</p> <p>3.Ընդունվել է</p>	<p>2.Լրամշակվել է</p> <p>3.Կատարվել է լրացում</p>
--	---	---	---